ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ ✦ НАШИ ЮБИЛЯРЫ

ԱԲԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Լրացավ սովետահայ խոշոր պատմաբան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի փոխնախագահ, ակադեմիկոս Աբգար Ռուբենի Հովհաննիսյանի ծննդյան 75-ամյակը:

Արդեն հինգ տասնամյակից ավելի է, ինչ Աբգար Հովհաննիսյանն իր ողջ եռանդը, ստեղծագործական մեծ կարողությունները և պատմաբանի ինքնատիպ տաղանդը ի սպաս է դրել հայրենի գիտության առաջընթացի շնորհակալ գործին: Նրա աշխատություններն աչքի են ընկնում զաղափարական նպատակասլացությամբ, հարցերի ու պրոբլեմների լայն ընդգրկումով, փաստարկման համոզչությամբ և նյութի մատուցման յուրօրինակ դյուրամատչելի եղանակով: Ա. Ռ. Հովհաննիսյանը մեծ վաստակ ունի Հայաստանում պատմական գիտության վերելքի, պատմագիտական կադրերի անեցման ու դաստիարակության գործում: Նա զգալի աշխատանք է տարել հասարակական գիտությունների տարբեր ճյուղերի առաջընթացն ապահովելու ուղղությամբ, նրա նախաձեռնությամբ և ղեկավարությամբ իրականացվել են բազմաթիվ գիտական միջոցառումներ, լույս են ընծայվել մեծ թվով ուսումնասիրություններ, որոնք նպաստել են գիտության զարգացմանը Սովետական Հայաստանում.

Աբգար Հովհաննիսյանը ծնվել է Թբիլիսիում 1908 թ., բարձրագույն կրթություն ստացել է Երևանի պետական համալսարանում, որտեղ և. ասպիրանտուրան Մոսկվայում ավարտելուց հետո, անցել է դասախոսական աշխատանքի: 1938 թ. նա պաշտպանել է դոկտորական դիսերտացիա, դարձել նոր պատմության ամբիոնի վարիչ, հետո՝ համալսարանի պրոռեկտոր: 1947 թ. Ա. Ռ. Հովհաննիսյանն ընտրվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ: 1947—53 թթ. նա եղել է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի դիրեկտոր, հետո տասը տարուց ավելի գլխավորել է գիտությունների ակադեմիայի հասարակական բաժանմունքը, իսկ 1967 թ. մինչև այժմ նա ակադեմիայի փոխնախագահն է:

Իր գիտահետազոտական գործունեության սկզբում Աբգար Հովհաննիսյանը զբաղվել է ֆրանսիական մեծ հեղափոխության զաղափարախոսության ուսումնասիրությամբ: Շարունակելով իր ուսուցչի՝ վ. Պ. Վոլգինի գործը, Ա. Հովհաննիսյանը կարողացավ ստեղծել ֆրանսիական ուտոպիստ սոցիալիստների հասարակական-քաղաքական ուսմունքներին նվիրված մենաշնորհ, մնայուն աշխատություններ:

Այդ բնագավառում նրա անդրանիկ հետազոտությունը (հրատարակված Մոսկվայում 1931 թ.) նվիրված էր ֆրանսիացի ուտոպիստ գրող Ռետիֆ դե լա Բրետոնին: 1936 թ. նա ներածական ակնարկով ու գիտական ծանոթագրություններով լույս ընծայեց նույն հեղինակի «Հարավային հայտնագործություն» գիրքը: Երեք տարի անց Մոսկվայում Ա. Հովհաննիսյանը տպագրեց իր դոկտո-

տական դիսերտացիան՝ նվիրված XIX դարի առաջին կեսի ուտոպիստ սոցիալիստ Շարլ Ֆուրիեի գաղափարությանը («Ֆուրիեի հասարակական իդեալի ծագումը»): Հետագայում, երբ հնարավորություն ստեղծվեց աշխատել նաև ֆրանսիական գրադարաններում և արխիվներում, Ա. Հովհաննիսյանը նոր նյութերի, իր կողմից գիտական շրջանառության մեջ դրված բազմաթիվ ուշագրավ փաստաթղթերի հիման վրա կրկին անդրադարձավ վերոհիշյալ հեղինակների ստեղծագործական ժառանգությանը: ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ 1958 թ. լույս ընծայվեց Ա. Հովհաննիսյանի «Շարլ Ֆուրիե» աշխատությունը, որը, մասնագետների կարծիքով, մեծ մրցանակի կյանքին ու գործունեությանը նվիրված լավագույն ստեղծագործություններից է: Այդ գրքում նշանակալի տեղ է տրվում նաև Ռետիֆ դե լյա Բրետոնին:

«Կոմունիստական գաղափարները ֆրանսիական մեծ հեղափոխության տարիներին» ընդարձակ մենագրության մեջ, հրատարակված Մոսկվայում 1966 թ., ամփոփված են այդ բնագավառում Ա. Հովհաննիսյանի երկարամյա ուսումնասիրությունների արդյունքները: Աշխատության շարադրմանը նախորդել է հեղինակի աղբյուրագիտական-հետազոտական մանրակրկիտ և արդյունավետ աշխատանքը ֆրանսիական մի շարք արխիվներում ու գրադարաններում: Նրա կողմից ի հայտ են բերվել մեծ թվով արժեքավոր վավերագրեր: Ժամանակագրական առումով մենագրությունն ընդգրկում է 1789—1794 թթ.: Առաջին գլխում հանգամանորեն քննարկված են արմատական հավասարապաշտության խնդիրները, որի ներկայացուցիչների որոշ մասն ընդհուպ մոտեցել էր կոմունիստական գաղափարներին: Հաջորդ գլուխը նվիրված է հեղափոխության առաջին շրջանի կոմունիստական համայնքներին, համայնական կոմունիզմին և կոոպերատիվ նախագծերին: Այնուհետև առանձին գլուխներ են հատկացված Ռետիֆ դե լյա Բրետոնի համայնավարական իդեալին և կոմունիստական խոշոր տեսաբան և քաղաքական գործիչ Ֆրանսուա Բուասելին: Վերջին գլխում ներկայացված են հեղափոխության և Յակոբինյան դիկտատուրայի ժամանակաշրջանի կոմունիստական գաղափարները:

Ա. Հովհաննիսյանի այս մենագրությունը խոշոր ներդրում է ֆրանսիական մեծ հեղափոխության կոմունիստական գաղափարների ուսումնասիրման ասպարեզում և այն իրավացիորեն արժանացել է սովետական և արտասահմանյան գիտնականների բարձր գնահատականին: 1974 թ. այդ գրքի համար Ա. Հովհաննիսյանին շնորհվեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Վ. Պ. Վոլգինի անվան մրցանակ: Աշխատությունը թարգմանված է ֆրանսերեն և շուտով կհրատարակվի Փարիզում:

1981 թ. Մոսկվայում լույս ընծայվեց ակադեմիկոս Աբգար Հովհաննիսյանի նոր ուսումնասիրությունը, որը նվիրված է XIX դարի առաջին կեսի ֆրանսիական ուտոպիական կոմունիզմի պատմությանը: Այդ կարևոր խնդիրը ինչպես հարկն է չէր հետազոտված գլխավորապես սկզբնաղբյուրների պակասի հետևանքով: Ա. Հովհաննիսյանի պրպտումների շնորհիվ հայտնաբերվեցին նոր փաստաթղթեր, անհայտ մնացած մի շարք հրատարակություններ և դրանց հիման վրա հնարավոր եղավ պատշաճ խորությամբ քննել խնդիրը և իրականացնել այդ ուշագրավ գրքի հրատարակությունը:

Արդեն արտադրության է իջեցվել և մոտ ժամանակներս Մոսկվայում լույս կտեսնի Ա. Հովհաննիսյանի «Հեղափոխական-կոմունիստական շարժումը Ֆրանսիայում 1840—41 թթ.» նոր մենագրությունը, որը դարձյալ շարադրված է ֆրանսիական արխիվներում պահվող նյութերի հիման վրա և կոմունիստական գաղափարներին զուգահեռ լուսաբանում է բանվորական կոմունիստական շարժումները ոչ միայն մայրաքաղաքում, այլև Լիոնում ու Ռուանում:

Ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանի գիտական հետազոտությունների մյուս բնագավառը հայոց պատմության կարևոր մի ժամանակաշրջանի՝ XVIII դարի կեսերից մինչև հաջորդ դարի սկզբների պատմությունն է: Մինչև Ա. Հովհաննիսյանի աշխատությունների հրապարակ գալը հայ ժողովրդի XVIII դարի երկրորդ կեսի պատմության շատ հարցեր ենթարկված չէին բազմակողմանի, խորը, մարքսիստական քննության ու լուսաբանման: Ա. Հովհաննիսյանը մեծ ավանդ ունի այդ շրջանի, ինչպես և XIX դարի սկզբների Անդրկովկասի և մասնավորապես Արևելյան Հայաստանի

պատմության կենսատ բազմաթիվ խնդիրների հետազոտման գործում: Մոսկվայի և Լենինգրադի մի շարք արխիվներում, ինչպես և Մաշտոցի անվան Մատենադարանում գտնվող սկզբնաղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրության հիման վրա նա բազմակողմանի քննության ու լուսաբանման է ենթարկել հայ ազատագրական շարժումն ընդդեմ թուրքական ու պարսկական տիրապետության, հայ-ռուսական հարաբերությունները, Ռուսաստանի քաղաքականությունը Անդրկովկասի և մասնավորապես Արևելյան Հայաստանի նկատմամբ, Անգլիայի ու Ֆրանսիայի պայքարը Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու դեմ և բազմաթիվ այլ խնդիրներ:

Աբգար Հովհաննիսյանի գրչին պատկանող «Հովսեփ էմին» ուսումնասիրությունը (Երևան. 1945 թ.) սովետահայ պատմագրության լավագույն գործերից մեկն է: Դա մեծ և լուրջ ուսումնասիրություն է XVIII դարի երկրորդ կեսի հայ ազգային ազատագրական շարժման ամենանշանավոր գործիչներից մեկի և, ընդհանրապես, այդ ժամանակ Հայաստանի մեջ և նրա սահմաններից դուրս, առանձնապես ենդկահայ և ռուսահայ գաղութներում ծավալված ազատագրական շարժումների մասին: Այս մենագրության մեջ հաջողությամբ շարադրված են Հովսեփ էմինի բազում դեպքերով և արժանահիշատակ եղելություններով հարուստ կյանքն ու գործունեությունը: Միաժամանակ վեր են հանվել և պատշաճ գնահատականի արժանացել այդ ժամանակաշրջանի ազատագրական շարժման մի շարք նշանավոր դեմքեր, որոնց հետ գործել է Հովսեփ էմինը: Գրքի արժեքն ավելի են բարձրացնում այն նորահայտ փաստաթղթերը, որոնք հավելվածի ձևով զետեղված են վերջում:

Ակադ. Ա. Հովհաննիսյանի հաջորդ մենագրությունը, որ հրապարակվեց 1947 թ.՝ «Ռուսաստանը և հայ ազատագրական շարժումը XVIII դարի 80-ական թվականներին», նվիրված էր թուրք-պարսկական նվաճողների դեմ ուղղված հայ ազատագրական շարժման մեջ Ռուսաստանի խաղացած դերին և հայ-ռուսական պատմական կապերին: Այդ գրքում ռուսական դիվանատներից ու Մատենադարանի ձեռագրատան ֆոնդերից քաղված փաստական հարուստ նյութերի հիման վրա հանգամանորեն լուսաբանված է XVIII դարի 80-ական թթ. Արևելյան Հայաստանի նկատմամբ ռուսական կառավարության վարած քաղաքականությունը: Հեղինակը համոզիչ կերպով ցույց է տվել, որ Ռուսական կայսրության քաղաքական և տնտեսական շահերն այն ժամանակ թելադրում էին Արևելյան Հայաստանը պարսից լծից ազատագրելու և հայկական պետականությունը վերականգնելու անհրաժեշտությունը: Բազմաթիվ փաստերով հիմնավորվում է այն իրողությունը, որ ստեղծված ծանր կացության մեջ ռուսական կողմնորոշումը հայ ժողովրդի միակ ճիշտ և փրկարար դիրքորոշումն էր:

Ինչպես Ա. Հովհաննիսյանի այլ աշխատություններ, այնպես էլ այս մենագրությունը հագեցված է փաստական արժեքավոր նյութերով: Հեղինակը մանրակրկիտ աշխատանք է տարել սկզբնաղբյուրների քննության և արժեքավորման ուղղությամբ: Այդ բնույթի հետազոտությունները թույլ են տվել նրան լուծել բազմաթիվ հանգուցներ և առեղծվածային խնդիրներ: Աշխատության մեկ երրորդը զբաղեցնում են առաջին անգամ հրապարակվող շուրջ ութ տասնյակ մեծարժեք փաստաթղթերի լուսանկարային պատճեններ և վերծանված բնագրեր:

Նախորդ աշխատությունների տրամաբանական շարունակությունն է հանդիսանում ակադ. Ա. Հովհաննիսյանի «Անդրկովկասի միացումը Ռուսաստանին և միջազգային հարաբերությունները XIX դարի սկզբին» մենագրությունը (Երևան, 1958 թ.), որը շարադրված է ակնարկների ձևով: Հեղինակը արգասավոր և հրանաջան աշխատանք է տարել տարբեր դիվանատներում սփռված այլալեզու բազմաթիվ սկզբնաղբյուրների հայտնաբերման և մեկնաբանության ուղղությամբ: Այդ հիմքի վրա նա կարողացել է համակողմանի և մանրամասն լուսաբանել Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու ժամանակաշրջանի միջազգային կացությունը, անգլո-ֆրանս-ռուսական հարաբերությունները Արևելքում և մասնավորապես Իրանում ու Անդրկովկասում. Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու դեմ Անգլիայի ու Ֆրանսիայի վարած ընդհանրական քաղաքականությունը, այդ երկու երկրների պայքարը՝ Իրանում գերիշխանության հասնելու համար: Բուրժուական պատմագրությունը ճգնում է ապացուցել, որ Անդրկովկասի և Իրանի նկատմամբ Անգլիան զավթողական ծրագրեր չի ունեցել, նրա միակ մտահոգությունն էր

Իրանին օգնություն և հովանավորություն ցույց տալով՝ կանխել և կանգնեցնել Ռուսաստանի առաջխաղացումը դեպի Հնդկաստան: Իսկ Ֆրանսիային Իրանը հետաքրքրել է, իբր, միայն Հնդկաստանի վրա արշավելու առումով: Ա. Հովհաննիսյանը բազմաթիվ փաստերով, քաղված գլխավորապես Եվրոպական աղբյուրներից, անառարկելիորեն ապացուցում է այդ տեսությունների կեղծ և հակագիտական լինելը: Նա ցույց է տալիս, որ նշված ժամանակներում թե՛ Անգլիան և թե՛ Ֆրանսիան անում էին ամեն ինչ Ռուսաստանի ազդեցությունն Արևելքում թուլացնելու, Անդրկովկասի միացումը Ռուսաստանին կանխելու և Իրանն իրենց տիրապետության ոլորտների մեջ առնելու համար:

Ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը մեծ վաստակ ունի հնդկահայ գաղութների պատմության, նրանց քաղաքական ու տնտեսական վիճակի, տեղական իշխանությունների, անգլիական փոխարքայության և Արևելա-հնդկական ընկերության հետ նրանց ունեցած հարաբերությունների, ազատագրական պայքարում նրանց խաղացած ակտիվ դերի բացահայտման ու արժևորման գործում: Իր մի շարք աշխատություններում, ինչպես և գիտական պարբերականներում հրապարակած հոդվածներում, նա մանրամասն կանգ է առել այդ խնդիրների, հատկապես Մադրասի հայրենասիրական խմբակի, նրա անդամների գործունեության և գաղափարախոսության վրա: Նշված հարցերը հետազոտված են մանրակրկիտ ձևով ու մեծ բարեխղճությամբ: Այդ ասպարեզում Ա. Հովհաննիսյանի ավանդը նպաստավոր է եղել հնդկահայոց նոր ժամանակների պատմության հետազոտման համար:

Արզար Հովհաննիսյանը զգալի աշխատանք է տարել նպաստելու հայ ժողովրդի պատմության, ՍՍՀՄ ժողովուրդների և համաշխարհային պատմության հատորների, ինչպես և Սովետական պատմական հանրագիտարանի ստեղծման գործին: Սովետական պատմագիտությունը նա բազմիցս ներկայացրել է պատմաբանների միջազգային հավաքներում: Նա գլխավորել է «Հայաստանի արվեստը Ուրարտուից մինչև մեր օրերը» ցուցահանդեսը, որը կազմակերպվել էր Փարիզում 1970—1971 թթ.:

Անվանի գիտնականի ծառայությունները բարձր են գնահատվել մեր կուսակցության ու կառավարության կողմից. նա Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ է, պարգևատրվել է Աշխատանքային Կարմիր դրոշի երկու, «Պատվո նշան» երկու և Հոկտեմբերյան հեղափոխության շքանշաններով:

Չնայած առաջացյալ տարիքին, ակադեմիկոս Արզար Հովհաննիսյանն այսօր էլ նոր եռանդով շարունակում է իր գիտահետազոտական աշխատանքները և գործուն մասնակցություն ցույց տալիս Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գիտական աշխատանքների ղեկավարմանը:

Պատմ. գիտ. դոկտոր Վ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ